ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

1731, Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, փողոց 6, շենք 10,
Վեբ-կայք: http://www.odzun.am, Skype: odzun.lori, Էլ. փոստ: odzun.lori@mta.gov.am (odzun@bk.ru)

թիվ 852-19
10 հոկտեմբերի, 2019թ.

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզպետ Ա. Ղուկասյանին

Հարգելի՝ պարոն Ղուկասյան,

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն, կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի 2019 թվականի N 146-Ա, N 147-Ա, N 148-Ա և N 149-Ա որոշումները:

Առդիր՝ 9 էջ:

Հարգանքով՝
Օձուն համայնքի ղեկավար Ա. Տիգրանյան

Կատարող՝ Ն. Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

8 հոկտեմբերի 2019 թվականի, N 146-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-048-010-000004 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշման՝

որոշում եմ.

1. Ելնելով հասցեավորման օբյեկտի տեղակայման դիրքից և այլ հասցեավորման օբյեկտների նկատմամբ նրա տեղակայման առավելագույն համապատասխանությունից, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի կազմի մեջ մտնող Ծաթեր բնակավայրի կադաստրային քարտեզի 06-048-010-000004 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.142 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Ծաթեր գյուղի 8-րդ փողոցի, թիվ 5 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2019թ., հոկտեմբերի 08,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

9 հոկտեմբերի 2019 թվականի, N 147-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՀԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-014-0006-0007 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.17194 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՌԼԵՆ ԳԱԼՈՒՍՏԻ ԱԲՈՎՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի առաջին և երրորդ հոդվածների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 51-54-րդ, 59-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 135-րդ և 202-րդ հոդվածներով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝

որոշում եմ.

հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, հողամասի և բնակելի տան հատակագծերը.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Այգեհատ գյուղի կադաստրային քարտեզի 06-014-0006-0007 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,17194 հեկտար մակերեսով, բնակելի տան կառուցման և սպասարկման համար նախատեսված, փաստացի առկա սահմանազատված հողամասի և հողամասում գտնվող՝ այլ անձանց իրավունքները և օրենքով պաշտպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը օրինական կառուցված (կառուցվել է 1950 թվականին) և 19.07.2008 թվականի դրությամբ առկա, 60,37 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տան (այսուհետ նաև՝ անշարժ գույք) նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը և այն օրենքի ուժով համարել որպես սեփական գույքը տիրապետող ֆիզիկական անձ՝ Կառլեն Գալուստի Աբովյանի՝ ծնված 22.05.1940թ. սեփականությունը:

2. Անշարժ գույքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1) Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

3. Սույն որոշման առաջին կետով սահմանված անշարժ գույքի սահմանները որոշվում են որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով և այն հանդիսանում է սույն որոշման բաղկացուցիչ և անբաժանելի մասը:

4. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

9 հոկտեմբերի 2019 թվականի, N 148-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետի, 80-րդ հոդվածի, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի երրորդ, չորրորդ, հինգերորդ, ութերորդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերի, 61-րդ հոդվածի առաջին կետի, 67-րդ, 68-րդ և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 463-465-րդ հոդվածների, «Ինտերնետով հրապարակային ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշման, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2019 թվականի օգոստոսի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի սեփականությունը հանդիսացող մի շարք հողամասեր օտարելու մասին» N 48-Ա որոշման՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկում (Օձունի համայնքապետարանի վարչական շենքում, հասցե՝ գ. Օձուն, փողոց 6, թիվ 10) 2019 թվականի նոյեմբերի 11-ին ժամը 12:00-ին, համայնքային սեփականություն հանդիսացող մի շարք հողամասեր (այսուհետ՝ անշարժ գույք) օտարելու նպատակով անցկացնել բաց աճուրդ (դասական եղանակով) հետևյալ լոտերով.

Լոտ 1: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝ համայնք) սեփականությունը հանդիսացող, համայնքի կազմի մեջ մտնող Այգեհատ գյուղի կադաստրային քարտեզի 06-014-0308-0077 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի 2.86474 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, օտարել աճուրդով:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել 3300000 (երեք միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ հինգ հազար (5000) ՀՀ դրամ:

Լոտ 2: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝ համայնք) սեփականությունը հանդիսացող, համայնքի կազմի մեջ մտնող Այգեհատ գյուղի կադաստրային քարտեզի 06-014-0308-0075 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի 2.35712 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, օտարել աճուրդով:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել 2800000 (երկու միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ հինգ հազար (5000) ՀՀ դրամ:

Լոտ 3: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝ համայնք) սեփականությունը հանդիսացող, համայնքի կազմի մեջ մտնող Այգեհատ գյուղի կադաստրային քարտեզի 06-014-0301-0026 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի 1.43798 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, օտարել աճուրդով:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել 1700000 (մեկ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ հինգ հազար (5000) ՀՀ դրամ:

Լոտ 4: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝ համայնք) սեփականությունը հանդիսացող, համայնքի կազմի մեջ մտնող Այգեհատ գյուղի կադաստրային քարտեզի 06-014-0308-0079 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի 1.2 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, օտարել աճուրդով:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել 1400000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ հինգ հազար (5000) ՀՀ դրամ:

Լոտ 5: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝ համայնք) սեփականությունը հանդիսացող, համայնքի կազմի մեջ մտնող Այգեհատ գյուղի կադաստրային քարտեզի 06-014-0308-0073 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի 3.85266 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, օտարել աճուրդով:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել 4400000 (չորս միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ հինգ հազար (5000) ՀՀ դրամ:

Լոտ 6: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝ համայնք) սեփականությունը հանդիսացող, համայնքի կազմի մեջ մտնող Այգեհատ գյուղի կադաստրային քարտեզի 06-014-0309-0043 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի 1.05265 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, օտարել աճուրդով:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել 1220000 (մեկ միլիոն երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ հինգ հազար (5000) ՀՀ դրամ:

Լոտ 7: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝ համայնք) սեփականությունը հանդիսացող, համայնքի կազմի մեջ մտնող Այգեհատ գյուղի կադաստրային քարտեզի 06-014-0548-0018 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսքի 1.21176 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, օտարել աճուրդով:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել 500000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ հինգ հազար (5000) ՀՀ դրամ:

Լոտ 8: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝ համայնք) սեփականությունը հանդիսացող, համայնքի կազմի մեջ մտնող Այգեհատ գյուղի կադաստրային քարտեզի 06-014-0548-0019 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսքի 0.38087 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, օտարել աճուրդով:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ հինգ հազար (5000) ՀՀ դրամ:

Լոտ 9: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝ համայնք) սեփականությունը հանդիսացող, համայնքի կազմի մեջ մտնող Այգեհատ գյուղի կադաստրային քարտեզի 06-014-0548-0017 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի 0.3349 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, օտարել աճուրդով:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել 400000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ հինգ հազար (5000) ՀՀ դրամ:

Լոտ 10: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝ համայնք) սեփականությունը հանդիսացող, համայնքի կազմի մեջ մտնող Այգեհատ գյուղի կադաստրային քարտեզի 06-014-0005-0001 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման 0.14337 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, օտարել աճուրդով:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել 350000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ հինգ հազար (5000) ՀՀ դրամ:

Լոտ 11: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝ համայնք) սեփականությունը հանդիսացող, համայնքի կազմի մեջ մտնող Այգեհատ գյուղի կադաստրային քարտեզի 06-014-0301-0027 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի 0.10013 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, օտարել աճուրդով:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել 120000 (հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ հինգ հազար (5000) ՀՀ դրամ:

2. Աճուրդում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն առաջարկում է վերջին ամենաբարձր գնային հայտը:

1) Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդում հաղթող մասնակիցը որոշվում է վիճակահանության միջոցով:

3. Սակարկություններում հաղթող մասնակցի հետ արձանագրության ստորագրման պահից նրան են անցնում համապատասխան լոտի վերաբերյալ առուվաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը:

1) Կնքվող պայմանագրերի էական պայմանները պետք է համապատասխանեն սակարկությունների մասին հրապարակային ծանուցմամբ սահմանված պայմաններին:

2) Աճուրդում հաղթած անձը տաս օրվա ընթացքում պարտավոր է ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքում ձևավորված գինը: Եթե նշված ժամկետում գինը չի վճարվում, ապա հաղթող է ճանաչվում սակարկությունների ընթացքում երկրորդ առավելագույն գին առաջարկած անձը, որը նույնպես պարտավոր է տաս օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել այդ գումարը:

3) Գումարն ամբողջությամբ վճարելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, աճուրդում հաղթող անձի հետ կնքվում է օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:

4) Օտարման պայմանագրում պետք է ամրագրվեն համայնքի հողի առաջնային հետգնման իրավունքը և տնտեսավարող սուբյեկտի կողմից իրականացվող ծրագրի ժամկետները:

Պայմանագրի խախտման դեպքում դա կարող է լուծվել դատական կարգով:

5) Սակարկություններում հաղթած անձի հետ պայմանագիր կնքելիս նրա մուծած նախավճարի գումարը հաշվարկվում է կնքվող պայմանագրով պարտավորությունների կատարման հաշվում:

6) Սակարկությունների ընթացքում վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության դրամով:

3. Աճուրդի անցկացման մասին տալ հայտարարություն http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, ինչպես նաև հայտարարությունը տեղադրել համայնքի պաշտոնական համացանցային կայքում և աճուրդի կայացման վայրում (Օձունի համայնքապետարանի վարչական շենքում) ցուցատախտակի վրա զետեղել հրապարակային ծանուցումը՝ աճուրդի կայացման օրվանից առնվազն մեկ օր առաջ:

Հայտերի ընդունման վերջնաժամկետ սահմանել 2019 թվականի նոյեմբերի 9-ը ժամը 17:00-ն:

4. 2019 թվականի նոյեմբերի 11-ին կայանալիք աճուրդին մասնակցելու համար ներկայացվող հայտերի ընդունման, համապատասխան արձանագրությունները և աճուրդի հետ կապված անհրաժեշտ այլ փաստաթղթեր կազմելու համար պատասխանատու անձ և աճուրդավար նշանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի կազմի մեջ մտնող Ամոջ բնակավայրի վարչական ղեկավարի Հարություն Հովհաննեսի Գալստյանին:

1) Աճուրդավարին և աշխատակազմին՝ կատարել նախապատրաստական աշխատանքներ, կազմակերպել և ստեղծել համապատասխան պայմաններ 2019 թվականի նոյեմբերի 11-ին կայանալիք աճուրդն անցկացնելու համար:

5. Անշարժ գույքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև անշարժ գույքի օտարման դեպքում չեն սահմանափակվում այլ անձանց իրավունքները և չեն խախտվում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը, ինչպես նաև չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:

Անշարժ գույքը ապահովված է անհրաժեշտ կոմունալ հարմարություններով:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2019թ., հոկտեմբերի 09,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

10 հոկտեմբերի 2019 թվականի, N 149-Ա

2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով, 35-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու (այսուհետ՝ ավագանի) 2017 թվականի նոյեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին» N 2-Ն որոշման համաձայն՝

որոշում եմ.

1. 2019 թվականի հոկտեմբերի 11-ին ժամը 11:00-ին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի վարչական շենքում՝ համայնքի ղեկավարի աշխատասենյակում, հրավիրել ավագանու արտահերթ դռնբաց նիստ:

2. 2019 թվականի հոկտեմբերի 11-ին կայանալիք ավագանու արտահերթ նիստի օրակարգում ընդգրկել հետևյալ հարցերի որոշման նախագծերը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2019թ., հոկտեմբերի 10,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի
2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 149-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.
(*զեկուցող՝ Ա. Տիտանյան*)

2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՄՈ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՅՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.
(*զեկուցող՝ Ա. Տիտանյան*)

3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.
(*զեկուցող՝ Ա. Տիտանյան*)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ